



Հաստատում եմ՝

ԵՊՀ պրոռեկտոր Է. Վ. Ասրիյան

09.10.2025

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արսեն Էդուարդի Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» խորագրով, Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցմամբ ատենախոսության մասին

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի 2025 թ. հոկտեմբերի 9-ի նիստում քննարկվեց Արսեն Էդուարդի Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» խորագրով ատենախոսական աշխատանքը՝ Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցմամբ:

Նիստին մասնակցում էին ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Հ. Ավետիսյանը, ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը, պ.գ.դ., պրոֆ. Ռ. Նահապետյանը, պ.գ.դ. Ա. Բորոխյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, պ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյանը, ամբիոնի դասախոսներ Բ. Գասպարյանը և Լ. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Բորոխյանը, Ա. Գնունին և Հ. Հարությունյանը՝ արձանագրելով հետևյալը:

Արսեն Էդուարդի Հարությունյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է Սյունյաց հոգևոր կենտրոն Տաթևի վանքի և վանքապատկան հարակից բնակավայրերի

գրավոր-մշակութային ժառանգության համակողմանի քննությանը: Թեև հեղինակի ուսումնասիրության առանցքում խնդրո առարկա միջնադարյան հուշարձանների վիմական արձանագրություններն են, սակայն առանձնակի ուշադրության են արժանացել նաև այդ նույն հուշարձաններից մեզ հասած ձեռագիր մատյանները, դրանց հիշատակարաններն ու մանրանկարչական արվեստը, ինչպես նաև՝ հուշարձանների ճարտարապետական հորինվածքը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, վանքի հետ կապված դավանաբանական-աստվածաբանական խնդիրները, որոնք և ընդգծում են աշխատանքի միջգիտակարգային բնույթը:

Ատենախոսությունը բաղկացած է երկու հիմնական մասից՝ բուն շարադրանքից (367 էջ) և հավելվածից (252 էջ): Առաջին մասն ամփոփում է ներածությունը, հինգ գլուխները՝ նյութից բխող ենթագլուխներով, եզրակացությունները (20 միավոր), օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերը (452 միավոր): Ինչ վերաբերում է ատենախոսության հավելվածին, ապա ատենախոսն այստեղ ժամանակագրորեն ամփոփել է իր իսկ ընդօրինակած 220 նորահայտ վիմագրերը (9-19-րդ դդ.), առաջին անգամ կազմել է Տաթևում ընդօրինակված, նկարազարդված, վերակազմված, տեղի գրատանը պահված ձեռագրերի համապատասխան ցուցակները՝ վերջում կցելով նաև Սյունյաց առաջնորդ-վանահայրերի գավազանագիրքը: Հավելվածի մասն են կազմում նաև 147 աղյուսակները, որոնցում հեղինակն ամփոփել է նյութից բխող շուրջ 500 հին ու նոր լուսանկար, 138 գրչանկար, 36 չափագրություն, որոնց կից են նաև ութ մեծադիր քարտեզները:

Ներածության մեջ հեղինակը լուսաբանում է աշխատանքի նորույթը, արդիականությունը, նյութի՝ նախկինում ուսումնասիրված լինելը, հետազոտության մեթոդաբանությունը, կառուցվածքային առանձնահատկությունները և այլն:

Ծավալային առումով ամենաընդարձակն ատենախոսության առաջին գլուխն է (էջ 20-147)՝ նվիրված Տաթևի վանական համալիրի պատմաճարտարապետական նկարագրին, հուշարձանների քանդակագործությանը, որմնանկարներին, շինարարական փուլերին, որոնք ուղեկցվում են նորահայտ և հրատարակված վիմագրերի մասնակի կամ ամբողջական հիշատակմամբ: Ատենախոսն այս մոտեցմամբ է առաջնորդվել նաև

ձեռագրերի հիշատակարաններից և մատենագրական աղբյուրներից օգտվելիս՝ իր տեսակետներն ու ենթադրությունները հիմնավորելով գրավոր փաստերով, որը միանգամայն ողջունելի է: Հատուկ ուշադրության են արժանացել նաև համալիրի հուշակոթողները, որոնք լուսաբանված են առանձին ենթագլուխներով՝ նվիրված Սբ Եվստաթեոս առաքյալին վերագրվող հուշակառույցին, ճոճվող գավազանակերպ սյանը, Սբ Պանդալեոնի անվանակիր կոթողին, խաչքարերին, տապանաքարերին: Նյութն այնքան սպառիչ է ներկայացված, որ հեղինակի ուշադրությունից չեն վրիպել անգամ եկեղեցական սպասքի արձանագրությունները, որոնց ևս առանձնակի անդրադարձ է արվել:

Հնագիտական, ի մասնավորի՝ աղբյուրագիտական բնույթի աշխատությունների շահեկան կողմերից մեկն էլ միջնադարյան ձեռագիր աղբյուրների անհրաժեշտ քննությունն է: Ատենախոսությունն այս առումով ևս ներկայանալի է, քանի որ երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Տաթևի վանքի գրչության դպրոցին և ձեռագրական ժառանգությանը (էջ 148-204): Ատենախոսն այն ուսումնասիրել է ըստ ձեռագրերի բովանդակային, մանրանկարչական, հիշատակարանային առանձնահատկությունների՝ չորջանցելով նաև Տաթևի երբեմնի գրատան, դպրոց-վարդապետարանի և համալսարանի գործունեությունը՝ հատկապես թաթևապետների՝ Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Զուղայեցու և մյուսների ավանդը Սյունյաց գիտակրթական մտքի զարգացման գործում:

Հատկանշելի է այն, որ ատենախոսը չի սահմանափակվել միայն բուն Տաթևի վանքի գրավոր-մշակութային ժառանգության քննությամբ: Ուսումնասիրության աշխարհագրական սահմաններն ընդլայնվել են վանքապատկան հարակից գյուղատեղերի ընդգրկմամբ, որն ամփոփված է ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխներում (էջ 205-290): Տաթևի, Հին Հալիծորի, Հին Շինուհայրի, Հին Խոտի, Հին Հարժիսի և վանքամերձ լքված գյուղատեղերի հուշարձանների հիմամբ ատենախոսը լուսաբանում է Սյունյաց միջնադարյան վանական կալվածատիրության փոխհարաբերությունները, հոգևոր և աշխարհական ավատատերերի միջև, գյուղացիական ապստամբությունները, վանքապատկան գյուղի կարգավիճակը և, իհարկե, խնդրո առարկա հուշարձանների գրավոր-մշակութային ժառանգությունը:

Ատենախոսությունն ամփոփվում է հինգերորդ գլխում Սյունյաց ուշմիջնադարյան անապատային համալիրների քննությամբ՝ առանցքում դիտարկելով Հալիձորի Հարանց կամ Սյունյաց Մեծ անապատը, Տաթևի Մեծ և Շինուհայրի Կուսանաց անապատները (էջ 291-321): Նկատենք, որ անապատների դեպքում ևս ատենախոսը մանրամասն ներկայացրել է դրանք իբրև գրչության և ձեռագրապահպան կենտրոններ:

Արձանագրենք, որ հեղինակի դիտարկումներն ու եզրակացությունները հիմնված են հնագիտական, աղբյուրագիտական, այսինքն՝ փաստական նյութի վրա և չկա որևէ կամայական կամ անհիմն դիտարկում: Ընտրված յուրօրինակ մեթոդաբանությամբ, այն է՝ հիմնականում Տաթևի վանքի հուշարձանախմբի օրինակով ներկայացվում են միջնադարյան Հայաստանի եկեղեցաշինության, քանդակագործության, գրչական ու վիմագրական ավանդույթների հետ զուգակցվող մի շարք երևույթներ, որոնք լիովին նորույթ են արդի հայագիտության մեջ: Աշխատանքն այս առումով միանգամայն նորարարական է, արժանի՝ հրատարակման: Շարադրանքում օգտագործված և առաջին անգամ հանրայնացված մեծարժեք նորահայտ նյութը՝ վիմագրեր, ձեռագրեր, քանդակներ, խաչքարեր, հին ու նոր լուսանկարներ և այլն, ունեն սկզբնաղբյուրային արժեք, ուստի հրատարակումից հետո այն մեծապես օգտակար է լինելու համապատասխան ֆակուլտետների ուսանողների, ինչու չէ նաև՝ միջնադարյան Հայաստանի պատմությամբ զբաղվող մասնագետների համար: Պակաս կարևոր չէ ընդգծել նաև այն, որ ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք, շարադրված է գեղեցիկ հայերենով, ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Այսքանով հանդերձ, կցանկանայինք առաջարկել, որ աշխատանքը հրատարակելիս հեղինակը Տաթևի վանքապատկան հարակից գյուղերի շարքում անդրադառնար նաև Բարձրավանին, առավել ևս, որ ատենախոսությանը կից համապատասխան քարտեզում այն նշված է (հավելված 7.3.3):


Ցանկալի կլիներ, որ որոշ լուսանկարների դեպքում պահպանվեր նաև մասշտաբը:

Վերստին արձանագրենք, որ կատարված է վիթխարի աշխատանք և հայ միջնադարագիտության բնագավառում այն ուղղակի ձեռքբերում է: Տաթևի վանքը լուսա-

բանված է բոլորովին նոր դիտանկյունից՝ հայագիտության ժամանակակից պահանջներին հարիր մեթոդաբանությամբ:

Այսպիսով, Արսեն Էդուարդի Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» խորագրով ատենախոսությունը լիովին համապատասխանում է Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար սահմանված պահանջներին, ուստի ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, միջնորդում է մասնագիտական խորհրդին՝ ատենախոսին շնորհելու իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը, որին նա իսկապես արժանի է:

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության
ամբիոնի վարիչ՝  պ.գ.դ., պրոֆ. Հ. Ավետիսյան

Պ.գ.դ., պրոֆ. Հ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտքարտուղար՝  Բ.գ.թ., դոցենտ Մ. Հովհաննիսյան



09.10.2025 թ.